ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» հոկտեմբերի 2025 թվականի

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Ավագ սերնդի սիրելի ներկայացուցիչներ

Սրտանց շնորհավորում եմ ձեզ հոկտեմբերի 1-ին նշվող Տարեցների միջազգային օրվա առթիվ:

Սա գեղեցիկ առիթ է մեր խորին հարգանքն ու երախտագիտությունը հայտնելու ձեզ՝ ձեր անցած կյանքի ճանապարհի, կուտակած փորձի և իմաստության համար:

Դուք մեր ընտանիքների լուսավոր ներկայությունն եք, համայնքի հիշողությունն ու ժողովրդի հարուստ փորձառության կենդանի պահապանները:

Ձեր անցած ուղին եղել է նվիրումի ու տքնաջան աշխատանքի պատմություն: Ձեր խորհուրդներն ու աջակցությունը շարունակում են ուղենիշ հանդիսանալ երիտասարդ սերնդի համար, իսկ ձեր ներկայությունը յուրաքանչյուր ընտանիքում իսկական օրհնություն է:

Ավագներին հարգելն ու մեծարելը սուրբ պարտականություն է: Որքան հարգանքով ենք մենք վերաբերվում մեծահասակ սերնդին, այնքան ամուր է դառնում մեր հասարակությունը: Այդ ավանդույթի պահպանումը մեր ապագայի կայունության և առաջընթացի կարևոր գրավականն է:

Սիրելի՛ մեծահասակներ, մեծագույն պատկառանքով մաղթում եմ ձեզ առողջություն, ընտանեկան ջերմություն և հոգու խաղաղություն:

Թող ձեր օրերը լցված լինեն սիրով ու հոգատարությամբ, իսկ ձեր ներկայությունը շարունակի մեր բոլորիս կյանքը դարձնել ավելի իմաստալից ու լուսավոր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ